

Հայաստանի Առաջին հանրապետութեան 100-ամեակի նշում Գանատայի մէջ

1918-ի մայսեան վճռորոշ յաղթանակներու վաղորդայնին հռչակուած Հայաստանի անկախ հանրապետութիւնը, կարծ ժամանակահաստուածի մը մէջ իր բազմաթիւ իրագործումներով, անջնջելի աւանդ թողած է մեր պատմութեան մէջ ու անժամանցելի է իր պատգամը Հայքան սերունդներուն: Օրհասական պահու մը ընդմէջն իր ծնունդով՝ Մայիսի 28-ին վերականգնեցաւ Հայոց պետականութիւնը, որ շուրջ ինն դարեր դադրած էր գոյութենէ՝ իր իսկ բնօրբան Հայկական Բարձրաւանդակին մէջ: Մեր պատմութեան վերջին ժամանակահաստուածին կոթողուած այս պետականութիւնը պահեց ու տակաւին կը պահէ՝ իր կինարար ներկայութիւնը մինչեւ այսօր:

Մէկ գար առաջ, Հայոց Յեղասպանութիւնը փրկուած հարիւր հազարաւոր գաղթականներով ծանրաբեռնուած եւ իր վրայ տարբեր ճակատներու վրայ պարտագրուած պատերազմներով ճնշուած՝ Հայ ժողովուրդի առաջին ժողովրդավար Հանրապետութիւնը կայացաւ բազում գոկութեան գոկութեան միահամուռ ծառացումը, հիմնադիր սերունդի անմնացորդ նուիրումն ու կամքը, եւ վերջապէս՝ Հայոց նորակազմ բանակի գիշացանական սկրանքները քարտէսի վրայ ես տեղադրեցին այն ինչը, որ մինչեւ օրս կը կոչենք պատ ու անկախ Հայաստան:

Գանատայի մէջ գործող Հայ ազգային երեք քաղաքական կուսակցութիւնները, քաջ գիտակցելով, որ այսօրուան մեր անկախ Հայրենիքը անվիճելի իրաւայացորդն է 100 տարի առաջ կերտուած հանրապետութեան, որոշած են պատշաճ շուրջով եւ պաշտոնական Հանդիսութիւններով նշել Հայոց պատմութեան այս կարեւոր յորելեանը:

Միանալով կայանալիք պետական եւ սիրուքեան համահայկական հանդիսութիւններու ալիքին, այժմէն իսկ կոչ կ'ուղղենք Գանատայի մէջ գործող տարբեր կազմակերպութիւններուն միութիւններուն համախմբութիւններուն համախմբութիւններուն համագործակցութային այս



նախաձեռնութեան շուրջ՝ նշելու համար մեր լինելութեան դարձակէտը հանդիսացող սարդարապատեան խոյանքներուն եւ անոնց ծնունդ՝ Հայաստանի Հանրապետութեան եւ Հայոց շարունակական պետականութեան հիմնադրման 100-ամեակը:

Հայութեան պահանջատիրական դատին ծառայելու պատրաստ՝ կը գիտակցինք, որ հզօր Հայրենիքն ու յանձնաւու Սփիւռքը, որպէս զիրար ամբողջացնող լրացուցիչ բաղադրիչներ, պիտի ամրագրեն Հայութեան միասնակամ երթը եւ ամրողական Հայաստանի կերտումի հաւատոյ հանդանակը:

ՍՊՀԿ Գանատայի Ծրջան
ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէ
ՌԱԿ Գանատա

Թորոնթոհայերը 530 հազար ԱՄՆ տոլար հանգանակեցին «Հայաստան» Հանահայկական Հիմնադրամին

Նոյեմբեր 12-ին Թորոնթոյի մէջ կայացած «Հայաստան» Համահայկական հիմնադրամի Թորոնթոյի մասնաճիւղին կողմէ կազմակերպուած Հանդիսաւոր ճաշկերոյթին, աւելի քան 400 գանատահայեր իրենց մասնակցութիւնը բերին եւ Հանդիսակեցին 530 հազար ԱՄՆ տոլար: Ճաշկերոյթին ընթացքին տեղի ունեցաւ նաև աճուրդ, ուր ֆութպորիստ Հենրիի Միհիթարեանի շապիկը վաճառուեցաւ 20 հազար ԱՄՆ տոլարի:

Հանդիսութիւնը նուիրուած էր Գանատայի 150-ամեակին եւ Թորոնթոյի «Հայաստան» Հիմնադրամի 25-ամեակին, որուն ընթացքին Հանդիս եկաւ նաև Գանատայի մօտ Հայաստանի արտակարգ եւ լիազօր գեսպան Լեւոն Մարտիրոսեանը, որ յատկապէս շեշտեց Հիմնադրամի գերա անկախ Հայաստանի եւ Արցախի գարգաման ծիրէն ներս:

Թորոնթոյի «Հայաստան» Հիմնադրամի ատենապետ Մկրտիչ Մկրտչեանը մանրամասնօրէն ներկայացուց Թորոնթոյի կողմէ իրականացուած վերջին 12 ծրագրերը, նշելով, որ 25 տարիներու ընթացքին ընդհանուր 72 ծրագրի կեանքի կոչուած է թորոնթոհայերու Հանդիսակութիւններով: Վերջին նախաձեռնութիւններն են՝ Ուխտասար գիւղի գալուցի կառուցումը, շտապ օգնութեան մեքենայի նուիրաբերումը, Դաղիկանք համայնքին ջրամատակարարման ապահովումը բնակարաններու կառուցում, Ուխտաձորի, Կուսապատի եւ Լուսաձորի մէջ, արտաքնոցներու կառուցում Շուշի, Ամարասի եւ Դաղիկանքի վանական համալիրներուն կից, բացօթեայ մարզահասպարակի կառուցում Նալբանդեան համայնքի գլուցին համար, որ վերանորոգուցած եւ մասնակիորէն վերակառուցուած է թորոնթոհայ բարերարներ Պերճուհի եւ Արմէն Նալպանտեաններու հովանաւորութեամբ 2016 թուականին:

«Հորիզոն»ի հետ կայացած հարցազրոյցի ընթացքին Գանատայի պաշտպանութեան հայսարադարան կարեւոր հետաքանակ համար կայացած հայութեան պատմութայի մէջ կայացած համագործակցութիւնը:



Կարդալ էջ 7

2017

CR-V

STARTING FROM
\$26,890*

Image for illustration purposes only.

*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777
www.hondagabriel.com

OPEN SATURDAYS

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobasarian





ARZ
fine foods

*Home to
Authentic
Mediterranean Gourmet*



COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



**TRY HEARING AIDS
RISK-FREE**

Call 416 754-4327



699 Coxwell Avenue
Toronto, ON M4C 3C1
Tel: 416 463-4327(HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road,
#65 Toronto, ON, M1R 4B9
Tel: 416 754-4327(HEAR)

www.hearingaidsource.ca

- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection

Images copyright Oticon Canada Ltd.



hearing aid source

invisible, custom & comfortable

«Աթքէն Արմէնեան» հիմնադրամը կ'առակցի հայրենի երաժշտասեր նորահաս սերունդին

Հարցազրոյց «Աթքէն Արմէնեան» հիմնադրամի տնօրէն Վան Արմէնեանի հետ

«Կոչ կ'ուղիեմ մեր ժողովուրդին, որ ներկայ ըլլալով մեր համոյթին քաջալերէ Հայաստանի մեր երաժշտական տաղանդ ունեցող երեխաները, անոնք իսկապէս արժանի են հոգատարութեան, որպէսզի ապագային իրենց նուաճումներով արդարօրէն հպարտանանք բոլորս, որպէս ազգ եւ ժողովուրդ»

Հ.-Պարո՞ն Վան, կը խնդրենի, որ դուք ձեզ ծանօթացնեք մեր ընթերցողներուն:

Վ.Ա.- Ծնած եմ Ալպերթա, Գանատա: Երաժշտական ուսումնական ստացած եմ Քեպէկ քաղաքի Conservatoire de music de Québec-ի մէջ, ապա աւարտած եմ Պումբընի New England Conservatory-ն, 2001-էն ի վեր հաստատած եմ Մոնթրէլ: Այժմ ջութակահար եմ, երաժշտութեամբ կը զբաղիմ եւ «Աթքէն Արմէնեան» հիմնադրամին տնօրէնն եմ: Նշեմ, որ Աթքէն Արմէնեանը հայրս է: Ան Հայաստանի անկախութենէն եւք հաստատեցաւ Հայաստան եւ զանազան բարեսիրական աշխատանքներ տարաւ հոն, ան նաեւ ունէր շատ ծրագիրներ կապուած գիւղատնտեսութեան, գիրքերու հրատարակման, երաժշտական եւ այլն: Երբ մահացաւ մենք իր յիշատակին հիմնեցինք այս հիմնադրամը:

Հ.-Պարո՞ն Արմէնեան » հիմնադրամը հիմնաւած է ինը տարի առաջ. այս ինը տարիներուն ընթացին ի՞նչ բնոյրի աշխատանք տարած է եւ ի՞նչ նապատակ կը հետապնդէ:

Վ.Ա.- Մենք կը փորձենք Հայաստանի մարգերուն մէջ տաղանդաւոր երաժշտ-դասաւուներ գտնել, ինչպէս նաեւ երաժշտական ձիրքեր ունեցող աշակերտներ, որոնց կը արամագրենք երաժշտական գործիքներ եւ կը յանձնենք զիրենք այդ դասաւուներուն, որպէսզի մասնագէտներու հսկողութեամբ զարգացնեն իրենց ձիրքերը: Նաեւ եղեգնաձորի մէջ երգչախումբ կազմած ենք, որ արդէն Հայաստանի մանկական լաւագոյն երգչախումբներին մէկ կը համարուի եւ այսօր արժանացած է զանազան մրցանակներու Հայաստանի, Վրաստանի մէջ եւ այլուր: Երգչախումբին կազմութեան նպատակն է յայտնաբերել երաժշտական տաղանդերը, ապահովել անոնց տաղանդաւոր ուսուցիչներ, ապա օժանդակել, որպէսզի կատարելագործեն իրենց երաժշտական ուսումը:

Որպէս օրինակ կինամ յիշել նարեկը, որ Քարագլուխի գիւղին մէջ հովուութեամբ կը զբաղէր եւ կենդանիները արածելու ժամանակ շատ գեղեցիկ ձայնով կ'երգէր: Մեր երգչախումբին ղեկավարը ծանօթներու միջոցաւ լսած էր իր մասին, հետաքրքրուած եւ յայտնաբերած էր իր մասին, անմիջապէս հովանաւորեցինք զինք եւ, այս տարեշրջանին, երեւանի երաշտական գալուցներէն մէկուն մէջ ուսանելու առիթը ընծացինք իրեն: Նախորդող երկու տարիներուն նարեկը բանակին կը ծառայէր եւ Արցախեան Քառօրեայ պատերազմին սահմանի վրայ էր, ան շատ ազդուած էր, երբ իր կողքի զինծառայող ընկերը նահատակուեր էր... զօրացրուելէն եւք, երբ իմացեր էր, որ մեր հիմնադրամը պիտի հոգայ իր երաժշտական ուսման ծախսերը՝ յուղումէն լացեր էր... Այս է «Աթքէն» հիմնադրամի նպատակը. գտնել մեր տաղանդաւոր երեխաներն ու աջակցի անոնց, որպէսզի կատարելագործեն իրենց երաժշտական ուսումը:

Վերջին երկու տարիներուն այլ բնոյթի ծրագրի մը եւս սկսանք օժանդակել եղեգնաձորի գիւղացիներուն օժանդակութեան նպատակաւ: Լաւալաբնակ թոնի Հալէպի, գիւղատնտեսական զարգացման ծրագիր մը (Syunik NGO) պիտի իրականցնէ Եղեգնաձորի մէջ, ըստ որուն գիւղացիներուն պիտի տրամադրուին պտղատու ծառերու տունկեր եւ մեղուարութեան անհրաժեշտ իրեղն, անոնց ապագայի հասոյթը ամբողջութեամբ պի-

տի մնայ գիւղացիներուն: «Աթքէն Արմէնեան» հիմնադրամին միջամտութեամբ տիար թոնիի այս ծրագիրը հունի մէջ դրուած է արդէն եւ որ պիտի ծառայէ շրջանի ժողովուրդին զարգացման եւ բարօրութեան:

Հ.-Պարո՞ն Վան, «Աթքէն Արմէնեան » հիմնադրամը ինչպիսի՞ իրագործումներ ձեռք բերած է ևս այսօր:

Վ.Ա.- Մեր իրագործումները զանազան են, մեր ամենամեծ իրագործումն է եղեգնաձորի երգչախումբը, որ արդէն իսկ մրցանակներու արժանացած է: Կրնամ այլ օրինակներ եւս յիշել Զաւախքէն Աննա Ղարպեան անունով աղջնակ մը, մերթ ընդ մերթ երեւան կու գայ եւ մեր մասնագէտին տունը մնալով (որմէ շատ չնորհակալ ենք այսիւ վերաբերմունքին համար) կը հետեւի յատուկ ծրագրի: Ան կարծ ժամանակէ մը եւք մրցոյթի մը մասնակցեցաւ նախ Վրաստան, ապա Խոսհին եւ մրցանակի արժանանալով առիթը պիտի ունենայացաւ յառաջիկայ Փետրուարին Խոսհիոյ մէջ երկու շարթուան տեւողութեամբ գասընթացքի մը մասնակցելու տաղանդաւոր դասաւուի մը հսկողութեան տակ:


Ունինք Կիւմրիէն Մարիամ Ժամակոչեանը (13



Հ.-Պարո՞ն կը հովանաւորեն ձեր ծրագիրները:

Վ.Ա.- Մենք ունինք սփիտուքի մէջ մնայուն հովանաւորներ, սակայն մեր ծրագիրները հսկելողական բնոյթը ունենալուն պատճառով յաճախ նոր հովանաւորներներ, կարիքը ունինք: Ունինք նաեւ Հայաստանին հովանաւորներ, ինչպէս՝ Հայաստանի Ամերիկեան համալսարանի պաշտօնեաներէն ոմանք, նաեւ Անթուան Մերձանեանը, որ 6 ամիս եղեգնաձոր, 6 ամիս ալ Օթթառուակապրի, ան մեր կազմակերպութեան սիւներէն է: Մենք մշտական փնտուառքի մէջ ենք նոր հովանաւորներու, որպէսզի չկասեցուին մեր հսկելողական ծրագիրները:

Հ.-Պարո՞ն կը հովանաւորեր 17-ին տեղի պիտի ունենայ «Աթքէն Արմէնեան » հիմնադրամի երկրորդ տարի-կան համոյթը. որո՞նք հանդիսավոր պատճառով յաճախ նոր հովանաւորներու կարիքը ունինք: Ունինք նաեւ Հայաստանին հովանաւորներ, ինչպէս՝ Հայաստանի Ամերիկեան համալսարանի պաշտօնեաներէն ոմանք, նաեւ Անթուան Մերձանեանը, որ 6 ամիս եղեգնաձոր, 6 ամիս ալ Օթթառուակապրի, ան մեր կազմակերպութեան սիւներէն է: Մենք մշտական փնտուառքի մէջ ենք նոր հովանաւորներու, որպէսզի չկասեցուին մեր հսկելողական ծրագիրները:



տարեկան) եւ եղեայը՝ Ալեքսանդրը (10 տարեկան): Մարիամը բացառիկ սրնագահար է, կրնամ ըսել, որ Հայաստանի լաւագոյն սրնագահարն է, տեղեկացանք, թէ սրինգի կարիքը ունի, որովհետեւ իր հին սրինգը անգործելի է այլեւս, նոյն ժամանակ Լոնդոն Royal Academy of Music գլուխոցի սրինգի դասաւուն, որ հօրս զարմիկին ծանօթէ, մեղի տրամադրեց իր սրինգը: Անմիջապէս զայն յանձնեցինք Մարիամին, որ առ այսօր կ'օգտագործէ զայն: Իսկ Ալեքսանդրը, տաղանդաւոր գաշնակահար է, Հայաստանի մէջ մրցանակի արժանանալով իրեն առիթը ընձայուեցաւ, որ Աւստրիայուու, իտալիայու եւ Սլովենիոյ մէջ յատուկ գասընթացքի եւ կողմանակի մասնակցի:

Ասոնք են մեր իրագործումները, մեր երեխաներուն իրագիրծումները:

Հարցազրոյցը վարեց՝ Սոնա Թիթիզեան

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼԱՄԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

«Յայ Յորիզոն» հեռատեսիլի յայտագիրը
կը սփոռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝

Videotron: HD616 կամ SD16	Հարաբ-առաօտեան ժամը 8:30-ին (սատօնին սփոռու)
Bell Fibe: HD1216 կամ SD216	Հնազարք-երեան ժամը 8:30-ին (սատօնին սփոռու)

Ուղիղ արձակում՝ www.icitelevision

Voyages
HAIG
Travel

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼԱՄԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

Վաճագուվըրի մէջ նշուեցաւ ՀՅԴ-ի 127-ամեակը



Նորաթ, 25 նոյեմբերին, երեկոյեան ժամը 7:00-ին, Վաճագուվըրի գաղութը, նախաձեռնութեամբ ՀՅԴ «Միմոն Վրացեան» կոմիտէութեան, մասնակցութեամբ ԳԵՄ-ի «Արշաւիր Շիրակեան» մասնաճիւղին եւ «Քրիստափոր Միքայէլեան» Պատանեկան միութեան, նշեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 125-ամեակը, Հայ կելքոնի «Լազարեան» սրահէն ներս:

Սրահը լեցուած էր Վաճագուվըրի հայ համայնքի գաւակներով եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան սուրբ գաղափարին ծառայող եւ հաւատացող հայորդիներով: Մթնոլորտը իւրայատուկ ջերմութեամբ ողողուած էր:

Զեռնարկը սկսաւ Հայաստանի Հանրապետութեան քայլերգով, որուն մասնակցեցան բոլոր ներկաները: ՀՅԴ «Միմոն Վրացեան» կոմիտէութեան հերթապահ ընկերուէի Թիֆթան Քէօչքէրեան, իր բարի գալուստի խօսքէն ետք, բեմ հրաւիրեց Գանաստայի Կերպոնական կոմիտէի անդամ ընկեր Վահէ Անտոննեանը: Ան իր խօսքին մէջ ըստ. «Այսօր հաւաքուած ենք այստեղ, մեր երախտագիտական գացումները յայտնելու ՀՅԴ-ին, շարքային ընկերներուն եւ Համակիրներուն: ՀՅԴ-ն իր ծնած օրէն ծառայելու առաքելութիւնը ունի, ծառայութիւնը իր ժողովուրդի բարօրութեան համար, ծառայութիւնը իր ժողովուրդի դատին համար եւ առհասարակ այդ առաքելութեան մէջ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը արձանագրած է նոր նուաճումներ: Բեղուն գործունէութեան երախտիքի եւ հապատութեան իրենց արդար բաժինը ունին անկասկած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համակիրները»: Ան նաեւ կարեւորութեամբ անդրադարձաւ այս աշխատանքին սրբութեան, որ կը սկսի մատղաշ տարիքէն եւ կը շարունակուի առանց աւարտի: Աւարտին ան չնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք շարունակ նեցուկ կանգնած են Հայ Դատի աշխատանքներուն:

Երեկոն ճոխացաւ յեղափոխական եւ դաշնակցական երգերով, որուն ներկաները ընկերակցեցան կարուելու:

Զեռնարկը փակուեցաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան քայլերգ «Մշակ Բանուուր»ով:

Մեղրիկ Սիլամիեան Զափանեան

ՀՅԴ «Միհրան Փափազեան» կոմիտէն հանդիպում ունեցաւ ՍԴՀԿ-ի Մոնթրէալի Վարիչ մարմնին հետ



Երկուշաբթի, 27 նոյեմբեր 2017-ին, Մոնթրէալի Հայ կեդրունին մէջ ՀՅԴ «Միհրան Փափազեան» կոմիտէն հանդիպում ունեցաւ ՍԴՀԿ-ի Մոնթրէալի Վարիչ մարմնին հետ, որուն մասնակից էին նաեւ ՀՅԴ Լաւալի «Սարգիս Զէլթեան» կոմիտէի եւ ՀՅԴ Գանաստայի Կերպոնական կոմիտէի ներկայացուցիչները:

Հանդիպումին ընթացքին արձարծուեցան Մեծն Մոնթրէալի Հայ գաղութը յուղող զանազան հարցեր: Անոնք շեշտադրեցին համագործակցութեան բարձր ուգին ու միասնական աշխատանքի կամեցողութիւնը, ի շահ Մոնթրէալի Հայ գաղութի գոյատեւման ու Հայ Դատի հետապնդման:

ՀՄԸՄ Լաւալի ճատրակի մարզիկները կը ստանան արոնցիք եւ արծաթեայ մետաղները

ՀՄԸՄ Լաւալի ճատրակի մարզիկները 26 նոյեմբեր 2017-ին մասնակցեցին «Maccabi Grand Prix 2017-2018 - Rated: CFC / FQE / CMA» մրցաշարքին, որ տեղի ունեցաւ Մոնթրէալի Jewish Russian Community Centre-ին մէջ, կազմակերպութեամբ Maccabi Montreal chess Club-ի անօրէն ու մարզիչ, ճատրակի միջազգային վարպետ Ալեքսանդր Լեւկովսկիի եւ մրցավարութեամբ world chess federation-ի մրցավար Վաղիմ Ֆիպինի:

Վերոնշեալ մրցաշարքը շատ կարեւոր եւ լուրջ մրցաշարքերէն մէկը կը նկատուի, ոչ միայն մասնակիցներուն եւ կազմակերպիչներուն բարձր մակարդակին համար, այլ նաեւ միաւորներուն գոնէ 50 տոկոսը ապահովող մասնակիցները իրաւունք կը ստանան մասնակցելու 2018 թուականի Գանաստայի Պատանիներու մրցաշարքին (CYCC- Canadian Youth Chess Championship), որ տեղի պիտի ունենայ Քեպէդ քաղաքին մէջ:

Մրցախաղի բացումը կատարեց պրին. Վագիմ Ֆիպինը: Ան բարի գալուստ եւ յաջողութիւնը մաղթեց բոլոր մասնակիցներուն եւ յատուկ ուրախութեամբ ողջունեց ՀՄԸՄ Լաւալի ճատրակի խումբին կեց մարզիկներուն մասնակցութիւնը:

Մեր մարզիկները, հակառակ իրենց անփորձութեան՝ նման բարձրորակ մրցախաղերու, հիանալի խաղացին, եւ հինգ մարզիկներ՝ Առէն Կարապետեան, Միքայէլ Մանուչարեան, Քրիստ Փիլաւճեան, Համբիլ Տէրտէրեան եւ Արամ-Սեւակ Աֆարեան, իրաւունք ստացան մասնակցելու 2018-ի Գանաստայի Պատանիներու մրցանքին:

Դեռ աւելին՝ Արամ Սեւակ Աֆարեանը մինչեւ 18 տարեկաններու կարգին մէջ արժանացաւ արծաթեայ մետալի, իսկ Համբիլ Տէրտէրեանը մինչեւ 16 տարեկաններու կարգին մէջ ստացաւ պրոնց մետալ:

Aline Shnorhokian
Mortgage Advisor
Tel: 1866 231-8876
Fax: 450 688-7555
Cell: 514 797-1375
aline.shnorhokian@cibc.com

Groupe Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Claire, QC H9R 4Z7

ALBERT ARKILANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker
aarkilanian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596
*certaines conditions s'appliquent

VÉHICULES D'OCCASION
CERTIFIÉS

GABRIEL

Kevork Asadourian
Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned
kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E, Anjou (OC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

École De Conduite
AZIG Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur: AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5,

Instruction Automatique ou manuelle
Suite 1438 - Centre Adonis II

NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agrée | Chartered Professional Accountant

Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan

nat.skaff@gmail.com
Tel. (514) 963 3363
2866 Rue De Champlain
Saint-Laurent, Québec
H4R 3B7

BRING YOUR OWN WINE

NAZARETH
CLASSIC GRILL

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644

AUTO SAMSON

MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

RE/MAX

ՀԱՅԿ ՅԱՐԹՈՒՆՅԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

C 514.574.6162
B 514.333.3000

NETTOYEUR
MARIE-CLAIREE

CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTREAL ET LAVAL)

2535 de Salaberry, Montréal
Tél: 514.334.7830

ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղի աւանդական տօնավաճառը տեղի ունեցաւ 11-12 Նոյեմբերին, ՀՄՀՄ Կամքի «Հայկ Մարգարեան» մարզապահչէն ներս:

Բացման պաշտօնական արարողութիւնը կատարուեցաւ ՀՕՄ-ի քայլերգով, որմէ ետք ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի ատենապետութիւնը ընկհ. Լիւսի Շահինեան կարգաց բացման խօսքը: Ան բարի գալուստ մաղթեց բոլոր ներկաներուն եւ գնահատեց ընկերուհիներուն տարած անխոնջ աշխատանքը, յատկապէս՝ ՀՕՄ-ի երիտասարդ անդամուհիներուն ժրաշան ներգրումը, ապա ներկայացուց այս տարուան տօնավաճառի կնքամայր ընկհ. Երան Պանքեանի երկարամեայ գործունէութիւնը ՀՕՄ-ի շաբերէն ներս: Ընկհ. Շահինեան հրաւիրեց Տէր Գառնիկ Աւագ Քահանայ Գոյունեանը իր հայրական աղօթքով օրհնելու ՀՕՄ-ուհիներն ու բոլոր ներկաները: Ան նաեւ հրաւիրեց կնքամայրը՝ տօնավաճառին մուտքին զետեղուած կարմիր ժապաւէնը կտրելու:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս բազմաթիւ էին կրպակներու, եւ բազմազան էին ցուցադրուած իրերը՝ նրբանաշակ զարդարանքով, գրաւիչ էին նաեւ ընկերուհիներուն պատրաստած աւանդական ճաշերը: Նկատակելի էր այցելուներու մեծ թիւը, որոնց դէմքին ժամանակամիտ ոչ միայն գոհունակութիւն, այլ նաեւ քաջակերանք:

Երկօրեայ տեւողութեամբ պազարը իր աւարտին հասաւ վիճակահանութեան քանի մը տասնեակ արժքաւոր նուէրներու բաշխումով:



Աշխատանքը հսկայ էր, սակայն կամքը զօրաւոր ու նպատակը մէկ: Ոչ մէկ ջանք իննայուած էր բոլոր հարաւորութիւնները ի սպաս դնելու՝ յաջողապէս ի կատար ածելու սոյն պազարը, որուն հասոյթը պիտի յատկացուի Ս. Յակոբ եկեղեցոյ կրթական հաստատութիւններուն:

Արփի Սանոսեան

Թորոնթոյի մէջ ժողովրդային հաւաք ՕՖՎԻ կազմակերպութեան Արցախ եւ Հայաստան այցելած պատուիրակութեան հետ

Կազմակերպութեամբ Գանատայի հայտապետութեան մէջ աշխատանքները:

Անոնք նշելէ եաք իրենց դրական տպաւութիւնները Արցախի մեր ժողովուրդին առօրեայ կեանքին, հասարակական եւ քաղաքական աշխատութեան եւ պետականաշխատութեան օրինակելի գործունէութեան մասին, յուղումով արտայատուեցան Ապրիլեան քառօրեայ պատերազմի ընթացքին տեղի ունեցած անարք ոնիրներուն մասին, զորս մեկնած էին քննելու:

Անոնք շեշտեցին, որ Արցախի ժողովուրդին իրաւունքները անառարկելի են, եւ անոնք արժանի են համայն աշխարհի յարգանքին եւ ճանաչման: Պատուիրակութեան անդամները հաւասիացուցին, որ իրենց եւ Հայ Դատի յանձնախումբի միասնական ջանքերուն չնորհիւ, պիտի շարունակեն աշխատի, որ Արցախի արդար գատը առաւելագոյն չափով լսելի դառնայ ոչ միայն գանատական իշխանութեանց, այլ նաեւ համայն աշխարհին:



Պատուիրակութեան անդամներուն խօսքերուն յաջորդցին ներկաներու հարցումները Արցախեան հիմնահարցին եւ տարածաշրջանային այլ աղդակներու մասին, որոնց համապատասխան լուսաբանութիւնները կատարեցին պատուիրակութեան անդամները:

Զեռնարկին աւարտին ցուցադր-

ուեցաւ պատուիրակութեան այցելութեան մասին վաւերագրական ժապաւէնին խսացուած ծանուցողական տարբերակը, որ այժմ պատրաստութեան ընթացքի մէջ է:

Հարկ է նշել, որ նմանատիպ ձեռնարկ մը տեղի պիտի ունենայ Մոնթրէալի մէջ յառաջիկայ ամիսներուն:

Շնորհանդէս «Թաքնուած գանձդ գտնել կուտ աղօթքի ճամբան» գիրքին



Կիրակի, 26 Նոյեմբեր 2017-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Մոնթրէալի Հայ կերպունի «Աշարոնեան» սրացէն ներս տեղի ունեցաւ «Թաքնուած գանձդ գտնել կուտ աղօթքի ճամբան» գիրքին շնորհանդէսը, հովանաւորութեամբ Գանատայի հայոց թեմի բարեհան առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն Արք. Զարեանի, ներկայութեամբ հոգեւոր հայրերու, գրասէրներու եւ Սուրբ Յակոբ եկեղեցոյ անդամներու:

Գիրքը «Բան եւ գիր» մատենաշարի 10-րդ հրատարակութիւնն է. հեղինակն է Օգոստինեան միաբանութենէն Պենինիս Օ՛Ռուլք, իսկ հայերէնի թարգմանած է Բրշ. Կարօ Արք. Նոխուտեան: Գիրքը լոյս տեսած է օրհնութեամբ Գերշ. Տ. Բարգէն Արք. Զարեանի եւ մեկնաստութեամբ տիկ. Ռաքէ Տէմիրենեանի՝ ի յիշատակ իր լուսահոգի քրող՝ Արմէնուհի Տէմիրենեանի:

Սուրբ Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Գառնիկ Ա. Քէն. Գոյունեան բարի գալուստի խօսքով հանդէս գալէ եաք ընթերցց Բրշ. Կարօ Արք. Նոխուտեանի հակիրճ կենսագրականը, ապա ներկայացուց թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տ. Գեղարդ. Ծ. Վրդ. Քիւսպէքեանը, որ այս առթիւ ժամանած էր Թորոնթոյէն՝ գիրքը ներկայացնելու:

Հայր Սուրբը նախ աղօթքին եւ աղօթելու կերպերուն մասին հակիրճ անդրա-

«Հորիզոն»ի հետ կայացած հարցազրոյցի ընթացքին Գանատայի անդամների աշխատանքները և այցելած պատուիրակութեան նախարար Սամանական կարգադրութիւնը հետաքանի համարական աշխատանքները:

Դեկտեմբեր 1-ին, Գանատայի կառավարութեան Քեպէգի գրասենեակին հրաւէրով, «Հորիզոն»ի խմբագրութիւնը յատուկ հարցազրոյց մը ունեցաւ Գանատայի Պաշտպանութեան նախարար Հարժիթ Սամանականի հետո: «Հորիզոն»ի խմբագրութեան կողմէ հարցազրոյցը վարիչ խմբագրի Վահագն Գարագանեան եւ «Հորիզոն»ի անգերէն բաժնի աշխատանքների աշխատանքներուն մասին պատուիրակութեան անդամների աշխատանքները:

Հարցազրոյցի ընթացքին անդրագարձակ եղաւ պաշտպանութեան բնագաւառէն ներս Գանատայի Հայաստան համապործակցութեան մասին: Նախարարը կարեւորեց վերոնշեալ երեւոյթը, յայտնելով որ յայտնապէս տարածաշրջանային առումով անհրաժեշտ են նման համապործակցութեան նախաձեռնութեամբ Սիացեալ Ազգերու կազմակերպութեան խաղաղարար աշխատանքներու ընդհանուր պարունակին մէջ:

Այլ հարցերու շարքին նախարարը անդրագարձաւ նաեւ Գանատայի ներկայ կառավարութեան կողմէ յառաջիկայ երկու տասնամեակներու ընթացքին 62 միթիառ տոլար պաշտպանութեան պիտունէի ծրագրային կարգ մը մանրամասնութիւններուն, ինչպէս նաեւ ներկայիս հակամարտութեան մէջ գտնուող աշխարհի կարգ մը շրջան-ներ գանատական բանակի խաղաղապահ ուժեք գործուղելու ծրագիրներուն մասին:

Նշենք, որ նախարար Սամանական Գանատայի պատուիրակութեան մէջ առաջին պատկանի աղքատանքն է, որ կը պատկանի աղքատին փոքրամասնութեան մը: Ան զինուորական իր ծառայութիւնը կատարած է Գանատայի բանակին մէջ որպէս գնդապետ: Գործուղուած է Պոսնիա-Հերցեկովինան եւ Աֆղանիստան, որմէ ետք 11 տարի ծառայած է Վահագնուվը ոստիկանութեան ոճրագործութեանց հետաքննութեան բաժանմունքին մէջ: Խորհրդարանի պատգամաւոր ընտրուած է 2015-ին եւ նոյն տարին վարչապետ Թրուտոյի կողմէ նշանակուած է Պաշտպանութեան նախարար:

Հարցազրոյցի աւարտին, «Հորիզոն»ի վարիչ խմբագրի Վահագն Գարագանեան նախարար Սամանական յանձնեց Արցախեան Ապրիլեան պատերազմին նուիրուած »Հորիզոն»ի 2016 թուականի եռալեզու բացառիկ թիւը եւ Հայոց Ցեղասպանութեան 102-ամեակին նուիրուած եռալեզու յաւելուածը:

ԱՂՕԹՔ... Ծար. Էջ 14

«Կոմիտաս» ռատիոկայանի հարցագրուցք ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանի հետ

**«Այս, Ինչ Հայաստանում Կոչում Է Ազգ-Բանակ,
Ես Կը Կոչեի Համաժողովրդական Բանակ»**

Հարաւային Ամերիկայի հայշատ գաղութներ այցելուրիների շրջանակում ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանը հարցազրոյց է տուել Ուրուկուէյի «Կոմիտաս» ռատիվայանին:

Կարօ Հէֆիմեանի հետ զրոյցում Հրանդ Մարգարեանն անդրադարձել է տարկէտման մասին օրէնքին, Հայաստանի Առաջին Հանրապետութէան 100ամեակին, ինչպէս նաև Արամ Մանուկեանի արձանի տեղադրման հարցին:

ԿԱՐՈ ՀԵՓԻՄԵԱՆ.- Մեզ շատ են հետաքրքրում Հայաստանը, Հայաստանի ժողովուրդն ու, ամենակարեւորը, Հայոց բանակը։ Վերջերս յատկապէս ուսանողութեան շրջանում բանալէին մեծ թեմա էր տարկիտման մասին հարցը։ Կան մարդիկ, ովքեր դէմ են այդ օրէնքի ընդունմանը, եւ կան մարդիկ, ովքեր կողմ են։ Դուք ի՞նչ կարծիք ունեք այդ մասին։

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ. - Հայկական իրականութիւնը շատ մեծ փոփոխութիւն է ապրել քառօրեայ պատերազմից յետոյ: Մեծ է նաև փոփոխութիւնը, որ տեղի է ունենում բանակում: Քառօրեայ պատերազմից յետոյ, ներքին առումով՝ հայաստանեան կեանքի իմաստով, փորձում ենք գոտիներս պնդել: Փորձում ենք անել այն, ինչ մեր ձեռքից բաց ենք թողել եւ չենք արել նախորդ տարիներին: Հարցերը կարգաւորելու ճիգը՝ երկրում աշխատանքային նոր հնարաւորութիւններ ստեղծելու, որպէսզի ժողովուրդը, երիտասարդութիւնը մնայ երկրում, ակնյայտ է: Այսինքն՝ առաջընթաց կայ: Չեմ ցանկանում չափազանցել, բայց մենք երկար ժամանակ ասում էինք՝ թունելի վերջում լոյս չկայ: Հիմա այդ լոյսը երեւում է, յոյսի նշոյլը կայ: Սա, իհարկէ, դրական է: Ինչ վերաբերում է բանակին, ես քաջատեղեակ եմ այդ օրէնքից, եւ կարծում եմ՝ շատ ճիշդ որոշում է: Նախարարութեան նախաձեռնութիւնը մի քանի բան է յաջողեցնում: Նախ՝ յաջողեցնում է, որ բանակում կոռուպցիան (կաշառակերութիւնը-և նմբ) վերացուի, մարդիկ այլեւս չունենան իրենց զաւակներին բանակային ծառայութիւնից ազատելու հնարաւորութիւն: Ծառայութիւնը պէտք է պարտադիր լինի բոլորի համար՝ համահաւասար: Բոլորն անխուսափելիօրէն պէտք է գնան բանակ: Խոկ տարկէտման օրէնքի մասին նոյնպէս կարծում եմ՝ մտահոգութիւններ չկան այս դէպքում, որովհետեւ մարողի հանգիստ կարող են արունակել իրենց

սամաւ սարիկը համգրսա պարով սս չալուսազու լրսաց
ուսումը, իսկ համալսարանն աւարտելուց յետոյ, որպէս
սպայ, մտնել բանակ: Քառօրեայ պատերազմից յետոյ
էլ, այսօր էլ նկատելի է, որ ինչ-որ ուժեր մտադիր են
բանակի դէմ միշտ պայքարել, բանակը վարկաբեկել,
բանակին չփողնել, որ ունենայ համապատասխան ար-
ժանապատութիւն եւ տեղ հասարակութեան մէջ: Ես
շատ գրական եմ գնահատում այսօր բանակում տեղի
ունեցող բարեփոխումները: Դրանից մեր երկիրը կը շա-
հի: Ի վերջոյ, այն, ինչ Հայաստանում կոչւում է ազգ-
բանակ, ես կը կոչէի համաժողովրդական բանակ: Մեր
երկրին անհրաժեշտ է, որովհետեւ մենք փոքրաթիւ ժո-
ղովուրդ ենք եւ շատ երկար սահմաններ ունենք պաշտ-
պանելու: Մենք մարդութիւ ինդիր ունենք եւ այդ հար-
ցը պէտք է կարողանանք լուծել նաեւ՝ ժողովրդին հա-
մապատասխան ձեւով կազմակերպելով: Այսօր ինչ
դրուած է սեղանին՝ որպէս բարեփոխում, ամբողջու-
թեամբ գրական եմ գնահատում:

ԿԱՐՈ ՀԵՔԻՄԵԱՆ.- Ուսանողութեան մի մասը
մտածում էր, որ այս օրէնքը կը նպաստի դասալիու-
թեանը: Այդ մասին ի՞նչ կ'ասէք:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ. - Ո՞չ, այդպէս չէ: Այդ
օրէնքով դու ուստմդ շարունակում ես, միաժամանակ՝
բանակային կրթութիւն ստանում: Եթէ դու պարտա-
ւորում ես երեք տարի ծառայել՝ որպէս սպայ, եւ
վճարում ես դրա համար, ապա պետութիւնը նաեւ
յանձն է առնում ուսանողութիւն ծախսը: Անգամ
դրանից յետոյ, եթէ ուսանողը ցանկանում է ընդունուել
ասպիրանտուրա, դարձեալ պետութիւնը վճարում է
դրա համար: Սա երկկողմանի նպաստաւոր է: Այսպի-
սով՝ մարզը չի կարող ուսանելու անուան տակ խուսա-
փել բանակից:

ԿԱՐՈ ՀԵՔԻՄԵԱՆ.- Առաջիկայում Հայատանի առաջին Հանրապետութեան 100ամեակն է։ Սփիլքում լայնածավալ աշխատանքներ են ընթանում

այդ առիթով, սակայն նոյնը չեն նկատում Հայաստանում: Հայոց 8եղասպանութեան 100րդ տարելիցի աշխատանքները սկսել էին դրանից դեռեւս չորս տարի առաջ, սակայն նոյնան աշխատանք չի տարւում Հայաստանի Հանրապետութեան 100ամեակի համար: Տարօրինակ չէ՞ սա:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵՐԱՆ.- Մեծ տարբերութիւն կայ: Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցը հայ ժողովրդի համար միանշանակ բովանդակութիւն եւ իմաստ ունէք: Մայիսի 28ի անկախութեան եւ պետականութեան վերականգնման տօնը նոյնանման ընկալում չունի, որովհետեւ թեման քաղաքականացուած է: Խորհրդային Միութեան ժամանակաշրջանում 70 տարիի արգելուած էր պետականութեան վերականգնման տօնը

նշել, եւ սա դժուարացնում է հարցը: Եւ այն մարդկիկ, ովքեր 70 տարի կրողն են եղել այդ մօտեցումի, այսինքն՝ անտեսել կամ արհամարգչել են Մայիսի 28ը, այսօր էներգիայով (ուժգնութեամբ-ևմբ.) դա կրում են իրենց մէջ եւ, բնականաբար, ինչ-որ տեղ ընդդիմանում են: Ինձ համար կարեւորը դա չէ, այլ այն, որ, վերջի-վերջոյ, մեր պետականութիւնը Հայաստանի Հանրապետութեան 100ամեակի շեմին անհրաժեշտ լրջութեամբ է մօտենում այս խնդրին, եւ նոյնիսկ այդ ուժերը, որ 70 տարի ինչ-որ քաղաքական պատճառով անտեսել են այդ փաստը, այսօր վերադառնում են նշելուն. դրանով պէտք է Հպարտանալ, դրանով մենք չպէտք է այլ մինուղործ ստեղծենք: Այս պետականութիւնը հայոց պետականութիւն է: Ճիշտ է, որ արմատներում կանգնած ենք՝ Դաշնակցութիւնը, բայց դա դաշնակցական հանրապետութիւն չէր. այդպիսի հանրապետութիւն չի լինում: Պետականութիւնը լինում է ազգային, եւ դա բոլորին է, այդ տօնն էլ է բոլորինը, այլ ոչ թէ միայն մերը: Եւ եթէ այսօր կայ հնարաւորութիւն, որ, 100ամեակից սկսած, մենք այս տօնը միացեալ տօնենք, արդէն լաւ է: Ասում են՝ երբ վնասի դէմն առնում ես, շահ է: Երբ սիսալը սրբագրում է, արդէն լաւ է: Իմ կոչը գաշ-նակցականներին պիտի լինի այն, որ Համեստ լինեն եւ այդ փաստն անընդհատ չմտցնեն սրա-նրա աչքը: Ինչ վերաբերում է միւսներին՝ սա խսկապէս ազգային-պետական տօն է, խորհուրդ եմ տալիս նրանց՝ կուսակցական, քաղաքական նկատառումներով գինու մէջ ջուր չխառնեն: Նշեն տօնը այնպէս, ինչպէս արժանի է:

ԿԱՐՈ ՀԵՔԻՄԵԱՆ.- Բայց կան նաեւ այնպիսի մարդիկ, որ անգամ քննարկում են՝ դնել, թէ չդնել Արամ Մանուկեանի արձանը:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԻԱՐԵԱՆ. - Այդպիսի մարդիկ այնքան քիչ են, որ չարժէ մտահոգութել կամ կարեւորել: Դրանք հազուագիւտ մարդիկ են: Փաստն այն է, որ Արամն իր արժանի տեղն է գտնում: Շատերը կ'ասէին, որ Հանրապետութեան հրապարակն է Արամի արժանի տեղը, բայց ես այդպէս չեմ կարծում: Այն տեղը, որ նախատեսել էինք նրա արձանի տեղադրման համար, նրան արժանի է: Այդ փաստով պէտք է ոգեւորուել: Այդ մի քանի հոգուն էլ, եթէ կան, որոնք գեռ կարծրատիպերը չեն կարողացել յաղթահարել, դեռ բարդոյթաւորուած են, դեռ նեղմտութուան մէջ մեռնում են, պէտք է անտեսել, որովհետեւ այսօրուայ մթնոլորտի մէջ չպէտք է թողնենք, որ այդ տեսակի երանգներ մտնեն: Այսօրուայ մթնոլորտի մէջ քաղաքական երանգ չպէտք է մտնի: Մայիս 28^ը որպէս ազգային տօն, ոչ կուսակցական տօն է եւ պէտք է նշուի մեր ժողովրդի կողմից:

ԿԱՐՈ ՀԵՔԻՄԵԱՆ.- Մի քանի տարի է՝ Հայաստանում աւելանում է երդում տուած դաշնակցական երիտասարդների և Դաշնակցութեան շարքերն անցնող երիտասարդների թիւը, ինչը յուսադրող է: Այսինքն՝ ճիշդ չէ այն միտքը, թէ Հայաստանում կուսակցութիւնը բոյլ է: Ի՞նչ կ'ասէք այդ մասին:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ.- Նախ ասեմ՝ Դաշնակցութեան ուժը, կարողականութիւնը քուէների չափով չի կշռում: Հաւատալով եմ ասում, եւ ասածիս մէջ կուսակցական «ես»ը չի խօսում Հայաստանում ամենակազմակերպուած, ամենագաղափարական կուսակցութիւնը Դաշնակցութիւնն է, եւ դա լաւ բան չէ: Կ'ուզէի մի քանի այդպիսի կուսակցութիւններ լինէին, որ իրական մրցակցութիւն լինէր, իրական մթնոլորտ լինէր, բայց փաստն այդպիսին չէ: Երիտասարդութեան մուտքը կուսակցութիւն իսկապէս ակներեւ է: Վերջին շրջանում կուսակցութեան մէջ բաւական մեծ թուով

անդամներ են աւելացել, եւ նրանց ճնշող մեծամասնութիւնը՝ գերմեծամասնութիւնը, երիտասարդներ են: Բանն այն է, որ գուցչ կուսակցութիւնը մի քանի տարի կազմակերպական ցանցի ընդլայնմանը կարեւորութիւն չէր տալիս, սակայն հիմա նոր թափով իրականացուում է: Ինչպէս 1990 թուականին մենք կազմակերպուեցինք՝ իբրև երիտասարդների կուսակցութիւն, այսօր նոյնպէս այդ ձեւով ենք վերակազմակերպում: Իհարկէ, դա յաւելեալ պարտաւորութիւն է դնում մեզ վրայ, քանի որ այդ երիտասարդութեան հետ պէտք է աշխատել, նրանց պէտք է տալ ինքնադրսեւորուելու ասպարէզ, որպէսզի իմաստ ունենայ այդ ամէնք: Այս առումով էլ մենք պէտք է ուշադիր լինենք, որպէսզի երիտասարդութիւնը մօտ ինքնադրսեւորման նոր ասպարէզ գտնի:

ԿԱՐՈ ՀԵՔԻՄԵԱՆ.- Անդրադառնանի Սփիտքի
խնդիրներին: Այցելեցիք Հարաւային Ամերիկայի
ամենահեռաւոր գաղութները: Այստեղ գտնուելու
մեկ շաբաթուայ ընթացքում դուք ի՞՞նչ խնդիրներ
նկատեցիք՝ մի քանի տարի առաջ ձեր այցելութեան
հետ համեմատելով:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵՒԱՆ.՝ Մարդու մօտ շատ հակասական զգացումներ են առաջանում, երբ գալիս է Հարաւային Ամերիկա: Հայաստանից այսքան հեռու, բայց այսքան հարազատ: Խսկապէս դա զարմանալի է: Օրինակ՝ երէկ եղայ Կորդովայում, երիտասարդ մի կազմ եմ տեսել, տղաների մի խումբ, որոնց մէջ հոգին նոյնն է, ինչ երեւանում է, ինչ Արցախում է: Մեր ազգային-Հայրենասիրական երգերը նոյն ոգեւորութեամբ են երգւում Արցախում, երեւանում, Կորդովայում, Բուլէնոս Այրեսում: Սա ինչ-որ բան է նշանակում. սա մեր ուժն է, սա մեր կարելիութիւնն ու հնարաւորութիւնն է, որ շատ ժողովուրդներ չունեն, աւելին՝ ոչ մի կուսակցութիւն չունի, որն այդ դէպքում մենք ունենք: Այդ հարազատութիւնը, այդ ապրումը, այդ հոգին, որ կայ, առկայ է այստեղ երիտասարդութեան, ժողովրդի մէջ, մեծ հարստութիւն է: Դա, իհարկէ, տալիս է արդիւնք եւ շարունակելու է տալ: Ի վերջոյ, պատահական է, որ Ուրուգուայն առաջինն է ճանաչել Հայոց Յեղասպանութիւնը: Առաջինն է եղել, որ Արցախի ճանաչման հարցով մեծ քայլեր է արել: Սրանք պատահականութիւններ չեն, սա աշխատանքի արդիւնք է, համայնքի աշխուժութեան, կարողութեան, ծանրակլութեան, ազգեցութեան, չափի ցուցանիշ է: Սա է ամենակարեւորը: Կարեւորն անպայման թիւը չէ, անպայման շատ լաւ հայերէն խօսելը չէ, կարեւորն այն ազգեցութիւնն է, որ գու կարողանում ես ունենալ քո երկրում, եւ յանուն քո խնդիրների, հարցերի ու ռազմավարութեան՝ նաեւ արդիւնքներ ստանալն է: Սա հպարտանալու երեւոյթ է: Ճիշդն ասած՝ շատ եմ ափսոսում, որ այս ժողովուրդը հեռու է Հայաստանից, կ'ուլզէի, որ այս ժողովուրդը հէնց Հայաստանում լինէր, որովհետեւ մենք շատ աւելի լաւ հասարակութիւն կ'ունենայինք, շատ աւելի լաւ պետականութիւն կ'ունենայինք, շատ աւելի ուժեղ կը լինէինք, լաւ զինուորներ կ'ունենայինք, ես վստահ եմ:

ԿԱՐՈ ՀԵՔԻՄԵԱՆ.- Դուք այստեղ հանդիպումներ ունեցաք նաեւ պետական ու կուսակցական անձերի հետ եւ տեսաք, այսպէս ասած, ձեր ասածների հայելին: Ի՞նչ կ'ասէք այդ մասին:

